26.433

334.63
Л-99

05.06.2013

26.1?3

17 FEB 2010

Հ-99

# Հ Ր Ա Հ Ա Ն Գ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻ ԱՆՀԱՏ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱ-ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԹԻԿԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ

### 1. Կազմակերպչական հրահանգներ

1. Տնտեսասոցիալական թերթիկները լրացվում են բոլոր անհատ անդամների, նաև վարչության և վերստուգիչ հանձնաժողովների անդամների և վարձով գյուղմեքենաներ գնողների (վոչ անդամների) համար: Վերջինների դեպքում հարկավոր է թերթիկի վերևում գրել՝ «վարչության անդամ», «վերստուգիչ հանձնաժողովի նախագահ», «վարձով գյուղմեքենաներ վերցնող» և այլն:

2. Թերթիկները լրացվում են հինգ տարով, սկսած 1927—28 թ., այսինքն՝ միևնույն թերթիկի վրա լրացվում են տեղեկություններ տվյալ անդամի (կամ գյուղմեքենաները վարձով վերցնողների վերաբերյալ) հինգ տարի շարունակ, հատկացնելով ամեն մի տարվա համար մեկ տող:

3. Թերթիկի առաջին 9 հարցի տվյալները անմիջապես վերցվում են ընկերության ունեցած տվյալներից, կամ անդամից (գյուղգործիքները վարձով ստացողներից) տեղեկանալով:

4. 10-րդ հարցը լրացվում է ընկերության գրքերից, գործառնական տարին վերջանալուց հետո անմիջապես: 11-րդ հարցի («տնտեսական դրություն») տեղեկությունները լրիվ կերպով վերցվում են գյուղական գյուղհարկի վճարողների ցուցակից:

5. Բոլոր լրացված թերթիկները պահվում են ընկերության [illegible] հատուկ արկղի մեջ, դասավորված ըստ գյուղերի, ամեն մի գյուղ[illegible] այբուբենական կարգով:

6. Գյուղհարկի տվյալները թերթիկներում [illegible] հարկավոր է հանձնարարել ընկերության վարչ[illegible] մեկին, կամ այդ աշխատանքների համար հրավիրել հատուկ աշխատակից:

7. Թյուրիմացություններից խուսափելու համար անհրաժեշտ է իմանալ, որ Ֆինժողկոմի և գյուղատնտեսական կոոպերացիայի տարիները տարբեր են: Այդ պատճառով, հարկավոր է 1927-28 թ. տվյալները լրացնելու համար օգտագործել 1928 թ. գարնանը կազմած հարկադրման հաշվառման տվյալները, 1928-29 տ. համար—1929 թ. գարնան կազմած հարկադրման հաշվառման տվյալները և այլն:

8. Տնտեսական տարին վերջանալուց հետո, լրացված բոլոր թերթիկները վերանայվում են սխալներն ուղղելու նպատակով և համեմատվում են ունեցած անհատ անդամների և կազմած թերթիկների թիվը: Տարվա ընթացքում ընկերությունից հեռացված անդամների թերթիկները պետք է զատվեն և հաշվառման մեջ չմտցվեն: Մնացած բոլոր թերթիկները պետք է խմբավորվեն ամփոփվեն (անդամներին և վարձով մեքենաներ վերցնողներին առանձին):

ՀՍԽՀ — ССРА Мясникяна

## 2. Հաշվառման թերթիկի սյունյակները լրացնելը

1. Ամենից առաջ հարկավոր է գրել թերթիկի համարը, բաց թողել, սկսած առաջին համարից: Համարակալումը պետք է լինի յերկու տեսակ՝ անդամների, վարչության, խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կազմի համար առանձին համարակալում, իսկ մեքենաներ վարկով վերցնողների համար առանձին: Վերևում պետք է գրել ընկերության անունը և հասցեն (գավառ, գավմաս և գյուղ):

2. Յերկրորդ հերթին պետք է լրացնել թերթիկի սկզբի ինն հարցերը:

«Ինչ այլ կոոպերատիվի անդամ է» հարցի պատասխանը պետք է գրվի կոոպերատիվի տեսակը և անունը, կամ յեթե անուն չունենա, գրել—տեսակը և վայրը (գյուղ):

Օրինակ—բամբակագործական—«Շարկ», չերամապահական—«Մետաքս» և այլն:

«Կուսակցություն» հարցի պատասխանը հարկավոր է գրել՝ կոմկուսի անդամ, կոմկուսի թեկնածու, կոմյերիտմիության անդամ, կոմյերիտմիության թեկնածու և անկուսակցական:

6-րդ հարցը գրված է նրա համար, վոր յեթե ընկերության անդամն ընտանիքի գլխավորը չէ, ապա նրա թերթիկը չի լինի գյուղհարկային ցուցակում. այդ դեպքում, իմանալով այդ տնտեսության գլխավորի անունը և ազգանունը, հարկավոր է գտնել այդ գլխավորի թերթիկը, նրանից արտագրել «տնտեսական դրություն» բոլոր հարցերը ընկերության անդամի թերթիկում:

3. «Վարկային հարաբերություններ» աղյուսակը լրացվում է միայն վարկային ընկերությունների վերաբերյալ և նրա բոլոր հարցերի պատասխանները, հարկավոր է վերցնել ընկերության հաշվապահական գրքերից: 2-րդ սյունյակում պետք է գրվեն՝ տարվա ընթացքում տրված բոլոր յերկարատև (մեկ տարուց ավելի) վարկերի (փոխառությունների) գումարը, 3-րդ սյունյակում՝ բոլոր կարճատև վարկերի գումարը և 4-րդ սյունյակում՝ այդ յերկուսի (2-րդի և 3-րդի) գումարը:

5-րդ սյունյակում՝ հարկավոր է գրել բոլոր մեքենամատակարարման վարկերը, 6-րդում—այդ թվից միայն բարդ մեքենաների համար: Բարդ մեքենաները հետևյալը պետք է համարել՝ ձիու կալսիչ մեքենա, շարքացան, սերմազտիչ մեքենա, տրակտորներ, հնձող մեքենա, հնձակապիչ մեքենա և խոտհար մեքենա:

7-րդ սյունյակում հարկավոր է գրել բոլոր ստացած կոնտրակտացիոն գումարները. 8-րդ սյունյակում գրել բոլոր վարկերը՝ բանվոր անասուն ձեռք բերելու. 9-րդ սյունյակում պետք է գրել բոլոր վարկերը՝ ստացված կաթնատու անասուն ձեռք բերելու համար և 10-րդ սյունյակում—բոլոր վարկերը ստացված չքավորական ֆոնդից: Օրինակ, յեթե չքավորական ֆոնդից տրված է բանվոր կամ կաթնատու անասուն գնելու կամ գյուղմեքենա ձեռք բերելու վարկ, ապա այդ գումարը պետք է գրվի թե չքավորական ֆոնդի (10-րդ



սյունյակում) և թե 5-րդ, 6-րդ, 8-րդ և 9-րդ սյունյակներից մեկում: 11-րդ, 12-րդ և 13-րդ սյունյակներում գրվում է տվյալ տնտեսության պարտքը տարվա վերջին (յերկարատև, կարճատև և ընդամենը), 4-րդ սյունյակում հարկավոր է գրել այդ մնացած պարտքից այն մասը, վորի մուծելու ժամկետը անցել է (ժամկետանց է):

15-րդ սյունյակում հարկավոր է գրել բոլոր այն մթերքների արժեքը, վորը տնտեսությունը հանձնել է ընկերությանը (կոնտրակտացիոն ձևով, կոմիսիոն հիմունքներով և կայուն հաշվով միասին):

4. Անդամի տնտեսական կապը ընկերության հետ: Այս աղյուսակը լրացվում է միմիայն մասնագիտական ընկերությունների անդամների վերաբերյալ՝ դարձյալ ընկերության մեջ յեղած գրքերից: Նա բաժանվում է յերկու մասի՝ առաջին մասում ցույց է տրվում թե ինչ է ստացել անդամն իր ընկերությունից ամեն մի տնտեսական տարում, 2-րդ մասում ցույց է տրվում թե ինչ է հանձնել անդամը իր ընկերությանը (նույնպես տնտեսական տարում): Ամեն մի տեսակի մասնագիտական ընկերության անդամների թերթիկներում գրված են այն մատակարարման ապրանքները կամ կոնտրակտացիոն գումարները, վորը նա կարող է ստանալ իր ընկերությունից: Օրինակ՝ բամբակագործական ընկերությունների անդամները կարող են ստանալ կոնտրակտացիոն գումարներ (սյունյակ 2), սերմացու (սյուն. 3 և 4), պարարտանյութ (5 և 6), ծծումբ (7 և 8), կիր և քուսպ (9 և 10) և ցորեն (11 և 12): Կաթնատուները կարող են ստանալ, բացի կոնտրակտացիոն գումարներից և չքավորական ֆոնդից (3) նաև ուժեղ կեր (4 և 5) և այլն:

Թե ինչ են հանձնում ընկերությանը մասնագիտական ընկերությունների անդամները, նույնպես տարբեր են: Օրինակ, ծխախոտագործական ընկերությունների անդամները հանձնում են ծխախոտ (սյունյակ 12 և 13), բամբակագործական ընկերության անդամները—բամբակ (սյուն. 14 և 15), կաթնատուները—կաթ (սյուն. 11 և 12), մեղվաբուծական—մեղր և մեղրամոմ (սյունյակ 10, 11, 12 և 13), չերամապահական—բոժոժ (սյունյակ 10 և 11) և այգեգործական—խաղող (սյունյակ 4 և 5), գինի (սյուն. 6 և 7), ծառապտուղ (8 և 9), բանջարեղեն (10 և 11) և այլն: Այսպիսով պարզաբանվում է ընկերության անդամի կապը իր ընկերության հետ:

5. «Տնտեսական դրություն» մասի բոլոր հարցերի պատասխանները, ինչպես վերև հիշեցինք, պետք է արտագրել գյուղհարկային համապատասխան թերթիկից: Վորպեսզի շուտ լինի և ճիշտ գտնվեն արտագրելու համապատասխան սյունյակները, ներքև տրվում է թերթիկի սյունյակների և գյուղհարկի ցուցակների սյունյակների համապատասխան համարները:

Այստեղ պետք է հիշեցնել, վոր գյուղհարկի թերթիկներում ցանքի տարածության պատասխանները կարող են լինել յերեքը—համապատասխան ուղղահայաց յերեք սյունյակներում, այն է,—«ընչապատկան», «կապալով կամ կիսրար վերցրած» և «կապալով կամ կիսրար տրված»: Այդ դեպքում թերթիկում հարկավոր է գրել առաջին յերկու թվի գումարը (այսինքն «ընչապատկան» և «կապալով կամ կիսրար վերցրած» հողերի ցանքսի տարածության գումարը):

*Թերթիկի «տնտեսական գրություն»*

*2-րդ սունյակը պետք է արտագրվի գյուղհարկի թերթիկի 30 րդ սունյակից*

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3-րդ | » | » | 31 | » | |
| 4 րդ | » | » | 4 | » | |
| 5-րդ | » | » | 6 բ. | » | |
| 6 րդ | » | » | 8 | » | |
| 7-րդ | » | » | 10 | » | |
| 8-րդ | » | » | 11 | » | |
| 9-րդ | » | » | 12 | » | |
| 10 րդ | » | » | 17 | » | |
| 12 րդ | » | » | 13 գ. | » | |
| 13 րդ | » | » | 14 գ.+15 | » | |
| 14 րդ | » | » | 23 | » | |
| 15-րդ | » | » | 20+21 | » | |
| 16 րդ | » | » | 25 | » | |
| 17-րդ | » | » | 1[illegible]+22 | » | |
| 18 րդ | » | » | 26 | » | |
| 19 րդ | » | » | 27 | » | |
| 20-րդ | » | » | 28+29 | » | |
| 21 րդ | » | » | 56 | » | (գրել միայն գութանները)· |
| 22-րդ | » | » | 57 | » | «գրել բարդ մեքենաների անունները). |
| 23 րդ | » | » | 54 | » | (չեթե թիվ չկա, գրել այո կամ ոչ) |
| 24 րդ | « | » | 53 | » | (նույնը) |
| 25-րդ | » | » | 52 | » | (չեթե բանվորական որերի թիվը չկա, գրել այո կամ ոչ) |
| 26 րդ | » | » | 55 | » | (գրել այո կամ ոչ) |
| 27 րդ | » | » | 32 | » | |
| 28-րդ | » | » | 35+36+37 | » | (գումարել բոլոր տողերի թվերը) |
| 29-րդ | » | » | 44 | » | |
| 30-րդ | » | » | 43 | » | |
| 31-րդ | » | » | 46 | » | |

*Անհրաժեշտ է հետևյալ պարզաբանումը.*

*ա) Արտագրողն ինքը պետք է անմիջապես գումարի 4+6+7+8+9+10 սունյակները և գումարը գրի 11-րդ սունյակում (ցանքսի ընդամենը):*



*բ) Այգիների մասին պետք է վերցվի տապահովագրվող, այլ ոչ հարկվող այգիների տարածությունը: Պտղատու այգիների հետ հարկավոր է գրել նաև թթենու անկարանները, իսկ ջերմապահական ընկերությունների համար գրել նաև առանձին թթենու տարածությունը:*

*գ) Կովերի և մատակների ևսկական թիվը չի կարելի գյուղհարկի թերթիկներից առնել: Այդ պատճառով, պետք է կովերի և մատակների հետ վերցնել նաև յերինջներն ու բուղաները (վորոնց թիվը համեմատաբար չնչին է):*

*դ) Թերթիկի 21-րդ սունյակը լրացնելու համար հարկավոր է գյուղհարկի թերթիկի 56-րդ սունյակից վերցնել միայն գութանները, իսկ 22-րդ սունյակը լրացնելու համար հարկավոր է գրել գյուղհարկի 57-րդ սունյակի բարդ մեքենաների անունը և թիվը:*

*յե) Հողի կապալի մասին հարկավոր է վերցնել գյուղհարկի թերթիկների 53 և 54 սունյակներից: Յեթե այդ սունյակներում թվեր չլինեն, հարկավոր է թերթիկում գրել «այո» կամ «վոչ» բառերը:*

*զ) Թերթիկի 25-րդ սունյակում հարկավոր է գրել մշտական կամ սեզոնային բանվորների բանվորական որերի թիվը: Յեթե գյուղհարկի 52-րդ սունյակում գրված չի լինի բանվոր որերի թիվը, ապա հարկավոր է գրել «այո» կամ «վոչ» (այսինքն՝ բանվորներ ունի թե վոչ):*

*է) Թերթիկի 26-րդ հարցի պատասխանը կարող է լինել միայն «այո» կամ «վոչ»:*

*ը) Թերթիկի 28-րդ սունյակում հարկավոր է գրել վոչ գյուղատնտեսական յեկամուտների հաստատված թվերի գումարները: Այսինքն, այստեղ հարկավոր է գրել գյուղհարկի 35, 36 և 37 սունյակներում գրված բոլոր թվերի գումարը:*

*թ) Այս աղյուսակում մի քանի մասնագիտական ընկերությունների անդամաթերթիկների մեջ մտցրված են 1–2 նոր սյունյակներ, վորի հետևանքով սյունյակների համարները փոփոխության են յենթարկվում: Այդ փոփոխությունները հետևյալներն են՝ ա) կաթնարտեների անդամների թերթիկներում ավելացված է մի սունյակ «արոտատեղ» (14) և կովերի ու մատակների թիվը տրված է առանձին, այսինքն ավելացված է նույնպես մեկ սունյակ (19), բ) մեղվաբուծական ընկերությունների անդամաթերթիկներում փեթակների թիվը—շրջանակավոր և հասարակ—տրված է առանձին, հետևապես ավելացել է մեկ սյունյակ (№ 20 ա)· գ) ջերմապահական ընկերության անդամաթերթիկներում ավելացված է թթենու անկարանների տարածություն առանձին (13ա): Ուրեմն ավելացել է մեկ սյունյակ:*

Անպատճառ հարկավոր է հաշվի առնել այդ փոփոխությունները և կույր կերպով չարտագրել վերևում հիշված համապատասխան սյունյակների թվերը:

**ՀԱՅԳՅՈՒՂԿՈՈՊԻ ՎԻՃ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՅԵ/ԲԱԺԻՆ**

*ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ*

*Պատվ. 3291* *Գրառեպգլխավար № 1328 (բ)* *Տիրաժ 1000*

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиотека
ՀՍՍՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

334.63:~~31~~
Հ-99

ՀՀ Ազգային գրադարան
NL0209241

ultra copy